ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ”Գանձապետական համակարգի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002թ դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանի պահանջները

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի 2011թ տարեկան ծրագրին համապատասխան “Ծովակի միջնակարգ դպրոց” պետական ոչ առևտրային կազմակերպությունում ֆինանսական գործառույթների ներքին աուդիտ անցկացնելու նպատակով ստեղծել աուդիտորական խումբ հետևյալ կազմով՝

Ղուլոյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի գլխավոր աուդիտոր

Պողոսյան Վ. - մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏՋ վարչության գլխավոր մասնագետ

Աղաջանյան Ռ.- մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության գլխավոր մասնագետ

Անհրաժեշտության դեպքում աուդիտորական խմբի մեջ ներգրավել համապատասխան մասնագետների և փորձագետների:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ՊՈՂՈՍՅԱՆ